# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

**PGG III. Արևելյան գործընկերության տարածաշրջանում տնտեսական հանցագործության կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների հզորացում**

**Իրականացման ժամանակահատված:** 01.03.2023 - 28.02.2026

**ԱլԳ երկրներ:**

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

**ԵՄ ներդրում:** € 592 615

**Ընդհանուր բյուջե:** € 762 500

**Իրականացնող կազմակերպություն(ներ):**

Council of Europe




**Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:**

facebook.com/partnershipgovernance,
https://twitter.com/CoE_EU_PGG

**Նախագծի կայքէջ:** partnership-governance-eu.coe.int/

**Նախագծի նկարագրություն:**

Տարածաշրջանային ծրագիրը նպատակ ունի աջակցել տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի ճանապարհին խոչընդոտների վերացմանը՝ ամրապնդելով տարածաշրջանում համագործակցությունը պայքարելով կոռուպցիայի, փողերի լվացման և ահաբեկչության ֆիանսավորման դեմ Արևելյան գործընկերության երկրներում:
Կարևորվելու են միջազգային չափանիշներն ու լավ փորձը: Այս ծրագրի միջոցով տրամադրվում է հարթակ՝ նպաստելու ԵՄ մակարդակով մշակված չափանիշների և լավագույն փորձի, ուղեցույցների և ուղղորդող փաստաթղթերի արդյունավետ կիրառմանը, որոնք ուղղված են կոնկրետ միջոցառումների իրականացմանը (փողերի լվացման ՓԼ/ահաբեկչության ֆինանսավորման ԱՖ կանխարգելման ոլորտում, բայց նաև նպատակաուղղված պատժամիջոցների համար) Արևելյան գործընկերության տարածաշրջանի իշխանությունների կողմից, և հատկապես մասնավոր հատվածի հետ նրանց փոխգործակցության մեջ:

**Ակնկալվող արդյունքներ:**

Ակնկալվող արդյունքներ.

1. Մշակել ռազմավարական մոտեցում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համար:
2. Ամրապնդել հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոցառումների արդյունավետ կիրառման կարողությունները մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ:
3. Ուժեղացնել իրավապահների և դատական համակարգի արձագանքը կոռուպցիոն բնույթի հանցագործություններին:
4. Ընդլայնել ոլորտային փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերի և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման ըմբռնումը և կառավարումը:
5. Ամրապնդել օրենսդրական շրջանակները և համագործակցությունը ակտիվների հետագծման և հանցագործությունից ստացված եկամուտների բռնագրավման գործում: